

ՄԵԾ ԽՆՁՈՒՅՔԸ

*«Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»
(Ղուկաս 14:24):*

Հիսուսի այս խոսքը Ղուկաս Ավետարանչի 14-րդ գլխի 16-24 համարներից է, ուր Նա պատմում է մի առակ ճաշկերույթի հրավիրող տանտիրոջ մասին:

Պատկերացրեք տանտիրոջ փոխարեն այս անգամ մեզ ճաշկերույթի հրավիրողը Ինքը՝ Յիսուս Քրիստոսն է: Առակը այս է.

«Մի պղծական մարդ ընթրիք է պատրաստում և իր բարեկամներին ու ընկերներին հրավիրում ներկա լինելու այդ ճաշկերույթին: Երբ ժամանակը գալիս է, նա իր ծառայի միջոցով նրանց լուր է ուղարկում, որ գան: Մական ամեն մեկը մի պատճառաբանությամբ հրաժարվում է ճաշկերույթին ներկա գտնվելուց: «Ագարակ գնեցի, և պետք է որ գնամ...» «Հինգ լուծ եզներ գնեցի. գնում եմ դրանք փորձելու» և այլն: Ապղծականը բարկանում է և իր ծառային հրամայում, իսկույն «Էուրս եկ ճանապարհներն ու ցանկապատերի առաջ և մարդկանց այստեղ մտցրո՛ւ, որպեսզի տունս լցվի: Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի» (Ղուկաս 14:16-24):

Ճաշկերույթը ներկայացնում է Աստծու Թագավորությունը, որը մարդիկ կարող են վայելել, եթե մասնակցեն դրան: Հիսուս աշխարհ եկավ և առաջին առիթով հրավիրեց Աստծու ընտրյալ ժողովրդին մաս կապմելու Աստծու Թագավորության, սակայն Նրա հրավերը չընդունվեց:

Առակի պատմածի նման Աստված մեզ ամեն կիրակի եկեղեցի է հրավիրում: Նրանք, որոնք գալիս են, պատրաստ թե անպատրաստ, նպատակ ունեն աղոթելու և մաքրվելու Գառնուկ Հիսուսի արյունով:

Եթե այսպիսի մի ճաշկերույթին հրավիրողը մենք լինեինք և իմանայինք հրավիրվածների մերժողական պատասխանը, բնական է, որ մենք ևս պիտի բարկանայինք և նեղվեինք: Բայց հարց է առաջանում, թե՞ «Ի՞նչ է լուծումը այսպիսի կացության»: Անշուշտ, որ չպիտի ուզեինք փչացնել պատրաստված ուտելիքները: Եթե թափեինք դրանք, մեր ամբողջ ծրագիրը, աշխատանքը, հույսն ու ուրախությունը չպիտի իրականանային: Մի բան պիտի մտածեինք: Նույն հասկացողությամբ պղծականը փրկում է դրությունը, դրսից ընդունելով աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին: Այս արարքով, նա մեզ հիշեցնում է ճաշկերույթին մասնակցել չուզող հրավիրվածներին ուղղված Հիսուսի խոսքը. *«Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»:*

Ահա տեսնում ենք, թե ինչպիսի ձևով ճաշկերույթը վերածվում է մի մեծ բարեգործու-թյան: Նրանք, որոնք պիտի սպասարկեին բարեկամներին ու ընկերներին, ծառայում են անծանոթ կարոտյալներին:

Բարեկամների ու ընկերների համար ճաշկերույթ տալը սխալ չէ, սակայն Հիսուս հիշեցնում է, թե ավելի բարձր վարձատրություն է սպասում մեզ, երբ մենք հրավիրում ենք այնպիսի մարդկանց,

որոնք մեզանից բախտավոր չեն և օգնության կարիքը ունեն: Երբ փնտրում ենք կարիքավորներին ու նրանց, որոնք չեն կարող վերադարձնել իրենց տրված բարիքների փոխարենը, այն ժամանակ կատարած կինենք մեր Տիրոջ պատվիրանը:

Մի ձկնորս գեանից քար վերցնելով ծովն է գցում: Քարը անմիջապես մտնում է ծովի հատակը: Ահավասիկ մի պատկեր, մի երևոյթ, որն Աստծու Սերն է բացատրում: Աստծու սիրան էլ ծովի պես է: Սերը օվկիանոսի չափ անհուն ու խորն է, որը կարող է ամբողջ մարդկության մեղքը ընդունել ու ներել: Արդյոք Աստված հաշվետետր ունի: Ինչո՞ւ պիտի ունենա, երբ միշտ ներում է:

Նեաված քարը կարող է վնաս պատճառել ամեն ինչին, բացառությամբ ջրի մեջ ընկնելուց: Ջուրը քարի հարվածներից չի վնասվում: Երբ քարը ծովի մեջ է ընկնում, նա միայն ժպտում է ու բարձրաձայն ծիծաղում: Մակայն, երբ քարով պատուհանին ենք հարվածում, ապակին ջարդ ու փշուր է լինում: Մեր սիրտը սիրո ու ներողամտության օվկիանոսի վերածելով, կարող ենք չեզոքացնել ամեն տեսակի թշնամական հարված ու կներենք: Փոխանակ մեր մասին խոսողներին ու բամբասողներին ուշադրություն դարձնելու և գիշեր ու ցերեկ բուններս փախցրած նրանց մասին մտածելու, առաջին հերթին քնենք ինքներս մեզ, մեր անձը, ճանաչենք այն: Մա անշուշտ ամենա- դժվարն է: Շատ կարևոր չէ, թե մեր մասին չարախոսողները ի՞նչ են անում և ի՞նչ են ծրագրում: Մենք մեզ հարց տանք, թե մենք ի՞նչ ենք արել և ի՞նչ ենք անելու ու թե բավական մեծ և խոր սեր ունե՞նք, որ կարողանանք նրանց ցանած չարիքը ջրի մեջ նետված քարի պես անվնաս դարձնել:

Հայ քրիստոնյայի համար շնորհակալություն հայտնելը պետք է լինի իր ամենօրյա պարտքը: Նախ, գոհություն պիտի հայտնենք Աստծուն իր բարիքների համար, մեր Հոգևոր Ծնող՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցուն ու մեր Սուրբ Հոգին՝ Մայր Հայրենիքին, ինչպես նաև մեր ֆիզիքական ծնողներին՝ իրենց հոգատարության ու խնամքի համար և երկրորդ, պարտատ պիտի լինենք իբրև երանելի հրավիրվածներ, մասնակցելու երկնքում Աստծու հավիտենական ճաշկերույթին: Ամեն: